



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Բարեկենդան Վարդավառի Պահոց տօնին առթիւ, Կիրակի, 4 Յունիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էսսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY MARTYRS CHURCH

On Sunday, July 4th, 2010, the eve of the Fast of Transfiguration, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino and deliver the sermon.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՍԱՆ 15ՐԴ
ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Ուրբաթ, 25 Յունիսին Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան մեկնեցաւ Թորոնթօ, միանալու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռիս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի շքախումբին: Ծանօթ է, որ Վեհափառ Հայրապետը պաշտօնական այցելութեամբ Զանատա կը գտնուէր, մասնակցելու համար ԳՑԻ միջկրօնական խորհրդաժողովին. ան այցելեց նաեւ Մոնթթեալի եւ Թորոնթոյի մեր ծխական համայնքներուն:

Կիրակի, 27 Յունիսին, Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագ մատուցեց Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, հանդիսապետութեամբ Վեհափառ Հայրապետին:



«Յայր Մեր»Էն առաջ,
Նախագահութեամբ
Քանաւոյի Յայոց Թեմի
Առաջնորդ Բարձր. Տ.
Խաժակ Արք. Յակոբեանի,
որուն կողքին կը գտնուէին
Նաեւ Թեհրանի Յայոց Թեմի
Առաջնորդ Բարձր. Տ.
Սեպուհ Արք. Սարգիսեան,
Գերպ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ.
Բարիքեան եւ Գերպ. Տ.
Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեան,
եկեղեցւոյ ատեանին մէջ
կատարուեցաւ
«Յայրապետական

Մաղթանք»ի արարողութիւնը, Վեհափառ Յայրապետին ընտրութեան,
օժման եւ գահակալութեան 15րդ տարեդարձին առիթով:

Արարողութենէն ետք, Քանաւոյի Թեմի Առաջնորդ Սրբազանը իր
ողջոյնի խօսքը ուղղեց Նորին Սրբութեան:

Վեհափառ Յայրապետի ոգեշնչող պատգամին սպասող
հաւատացեալներուն իր հայրական խօսքը ուղղեց Նորին Սրբութիւնը:

Շաբաթ, 26 Յունիսի երեկոյեան, տեղի ունեցաւ ժողովրդային
պաշտօնական ճաշկերոյթ, ի պատիւ Վեհափառ Յայրապետին՝
ընտրութեան, օժման եւ գահակալութեան 15ամեակին առիթով:

Գանատայի Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի,
Թեհրանի Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանի, Թեմիս
Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի, Ազգային Վարչութեան
ու Թորոնթոյի շրջանի պատասխանատու մարմիններու
ներկայացուցիչներու կողմէ արտասանուած պաշտօնական խօսքերով
յազեցած երեկոյին եկաւ անելնալու գեղարուեստական ճոխ յայտագիրը:

Աւելի քան 500 հրաւիրեալներու ներկայութեան, Վեհափառ
Յայրապետը իր պատգամը փոխանցեց:

«Ի վեհ բարձանց» եւ «Կիլիկիա» մաղթերգներու հաւաքական
երգեցողութեամբ, ու Վեհափառ Յայրապետի «Պահպանիչ»ով փակուեցաւ
ոգեշնչող երեկոն:

ON THE 15TH ANNIVERSARY OF THE ELECTION OF H.H. CATHOLICOS ARAM I

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH IN TORONTO

On Friday, June 25th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian,
Prelate, headed to Toronto to join H.H. Catholicos Aram I on his Pontifical Visit.
On Sunday, June 27th, the Prelate celebrated Divine Liturgy at St. Mary's
Church in Toronto, presided over by His Holiness.



During the service, the 15th anniversary of the election and consecration of His Holiness was celebrated, led by Prelate of Canada H.E. Archbishop Khajag Hagopian. Participating in the service were Prelate of Tehran H.E. Archbishop Sebouh Sarkissian, Pastor of St. Mary's Church Very Rev. Fr. Meghriq Parikian, and Catholicosate Communications Officer Very Rev. Fr. Krikor Chiftjian.

Following the Pontifical Thanksgiving Prayers, His Holiness delivered his message to the faithful.

The banquet in honor of His Holiness was held on Saturday evening. The Prelate was among the speakers, along with Archbishop Hagopian, Archbishop Sarkissian, Canada Prelacy Executive Council members, and members of local sister organizations.

His Holiness delivered his message to the over 500 guests in attendance, and the evening concluded with the benediction and the singing of the Pontifical and Cilician anthems.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՐԵՐԱՐ ԼԵՐԻ ՊԱՐՆԶԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 1 Յուլիսի կեսօրին, Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Լաս Վեկասի Ս. Կարապետ եկեղեցւոյ գլխաւոր բարերար Տիար Լերի Պարնզի, որ Ազգային Առաջնորդարան ժամանեց ընկերակցութեամբ եկեղեցւոյ ծխական յանձնախումբի ատենապետ Տիար Ատրուշան Արմենեանի եւ Տիար Լեւոն Կիւլպէնկեանի: Հանդիպումին ներկայ եղան Ազգային Վարչութեան եւ Առաջնորդարանի Շէնքի Հոգատարութեան յանձնախումբի անդամներէն Տեարք Վահան Պգոիկեան եւ Վահրիճ Փիլաւճեան:

Ծանօթ է, որ Տիար Լերի Պարնզ անցեալ Դեկտեմբերին, եւ ի յիշատակ իր

հանգուցեալ կնոջ՝ Սեդա Տէր Կարապետեան-Պարնզի ու ցեղասպանութեան զոհ գացած անոր ընտանիքի անդամներուն, յանձն առած էր Լաս Վեկասի նորահաստատ եկեղեցւոյ բարերարութիւնը, կատարելով իշխանական նուիրատուութիւն մը: Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանին ու Թեմիս ժողովականութեան խնդրանքին, եւ բարձր գնահատելով ազնիւ բարերարին նուիրաբերումը, Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանը շնորհած էր անոր: Շքանշանին յանձնումը տեղի ունեցած էր 23 Մայիսին, Առաջնորդ Սրբազանին ձեռամբ, Լաս Վեկասի մէջ, եկեղեցւոյ կից սրահին բացման հանդիսութեան առիթով: Անթիլիաս իր այցելութենէն (Յունիսի սկիզբը) վերադարձէն ետք, Յինգշաբթի օր, Առաջնորդ Սրբազանը Վեհափառ Յայրապետին սրբատառ կոնդակը յանձնեց յարգելի բարերարին, անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնելով անոր նուիրաբերումին ու Լաս Վեկասի մեր ծխական համայնքին յարատեւ զօրակցութեան համար:

Տիար Լ. Պարնզ շնորհակալութեան խօսք ուղղեց Վեհափառ Յայրապետին ու Առաջնորդ Սրբազանին:

Յանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը բարերարն ու ներկաները հիւրասիրեց ճաշով, որուն աւարտին, խորհրդակցութեան նիւթ դարձան Ս. Կարապետ եկեղեցւոյ շինարարութեան ծրագիրները, մեկնելով պատրաստուած նախագիծերէն Յանձնախումբը աշխատանք կը տանի, որպէսզի շինարարական ու յարակից աշխատանքները գործնական ճամբու մէջ մտնեն յառաջիկայ ամիսներուն:

PRELATE WELCOMES BENEFACTOR MR. LARRY BARNES



On Thursday, July 1st, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the benefactor of St. Garabed Church of Las Vegas Mr. Larry Barnes. Mr. Barnes was accompanied by Las Vegas Parish Council Chair Mr. Adroushan Armenian and Mr. Levon Gulbenkian. The Prelate was joined by Executive Council and

Building Committee members Mr. Vahan Bezdikian and Mr. Vahrij Pilavjian.

In December of 2009, Mr. Barnes made a generous donation for the construction of St. Garabed Church in memory of his wife Seda Der Garabedian-Barnes. By the request of the Prelate and Councils, H.H. Catholicos Aram I awarded Mr. Barnes the "Knight of Cilicia" medal in recognition of his generosity, which the Prelate bestowed upon the benefactor during the inauguration of the cultural center hall on May 23rd, 2010. In June

the Prelate returned from a visit to Antelias with the Pontifical encyclical, which he presented to Mr. Barnes during their meeting on Thursday. Mr. Barnes conveyed his appreciation to His Holiness and the Prelate for the honor.

Following the meeting the benefactor and guests were hosted to lunch, after which they went over the plans and blueprint of the church.
